4. Ս. Վարվառան ձեռքում բռնած է մի արմավենի (№ 3348)	16×22	—	—
5. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3405)	33×44.5	—	—
6. Ս. Գեորգ ձիավորը կռվում է վիշապի հետ (№ 3414)	31.5×38.5	—	—
7. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3414)	30×38.5	—	—
8. Հիսուս մանուկը ս. Կույսի գրկում (№ 3404)	34×42	—	ԻԲՐԱՀԻՄ և ՀԱՆՆԱ
9. Ս. Փիլիպպոս առաքյալը (№ 3430) ձախին	28.5×41	—	—
10. Ս. Բարթուղիմեոս առաքյալը (№ 3430) աջին	28×40.5	—	—
11. Քրիստոսը գահի վրա (№ 3362)	43×61	1748	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
12. Քրիստոսը գահի վրա (№ 3374)	36×46	1777	—
13. Միքայել հրեշտակապետը (№ 3771)	53×65	1750	ԻԲՐԱՀԻՄ և ՅՈՒՀԱՆՆԱ
14. Ս. Մինաս նահատակ (№ 3368)	34×57	—	—
15. Ս. Բարսեղ, Կեսարիո եպիսկոպոս (№ 3415)	23.5×66	—	—
16. Ս. Պողոս և ս. Անտոնիոս (№ 3418)	46×48.5	1777	—
17. Մանուկ Հիսուսը ս. Կույսի գրկում (№ 3367)	39×54	—	—

Ն. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇԱՄՇԱԴԻՆԻ ԵՎ ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿԻ ՇՐՋԱՆՆԵՐԻ ԿԻԿԼՈՊՅԱՆ ԱՄՐՈՑՆԵՐԸ

ՀՍՍՀ Շամշադինի և Կրասնոսելսկի շրջաններն ընկած են Աղստև ու Տաուշ գետերի ավազաններում, ընդ որում, նրանք արևելքից և հյուսիս-արևելքից սահմանակից են Գետաբեկին և Շամխորին, հյուսիս-արևմուտքից Ղազախի, Իջևանի և Նոյեմբերյանի շրջաններին, իսկ Կրասնոսելսկը սահմանագծվում է Սևանա լճի հյուսիս-արևմտյան ափերով։ Այդ շրջանները հնագիտական առումով ամենաքիչ ուսումնասիրված վայրերից են։

1958 թ. Նավուր գյուղում պատահականորեն գտնված երկու բրոնզե կացին հանձնվեցին Հայաստանի պատմության թանգարանին։ Քիչ ավելի ուշ պատմ. գիտ. դոկտոր Հ. Մարտիրոսյանի կողմից բերվեցին մի քանի կավանոթներ և բրոնզե զարդեր և Բերգում պատահականորեն հայտնաբերված անտիկ գրամների գանձ[1]։

Շամշադինի շրջանում հայտնաբերվեցին ութ կիկլոպյան ամրոցներ, որոնցից երեքի մասին տեղեկություններ հրապարակված են[2]։

Կրասնոսելսկի շրջանում հայտնաբերվել են վեց կիկլոպյան ամրոցներ։ Նշված շրջանների ամրոցները չափագրվել են ճարտարապետ Ռ. Դանիելյանի կողմից։

ՇԱՄՇԱԴԻՆԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Տանձուտ ամրոցը գտնվում է Նավուր գյուղից հինգ կմ հարավ, բարձր ժայռաբլրի վրա (164 մ×125 մ, որը մոտ երկու հեկտար է)։ Բլուրը հարավից միանում է սարալանջին, իսկ մյուս երեք կողմերից եզրագծված է գահավեժ լանջերով։ Ամրոցը կառուցված է բլրի ուրվագծին համապատասխան և ոչ ճիշտ ձվաձև է։ Հարավային և հարավ-արևմտյան կողմերից՝ սարալանջի ուղղությամբ ամրոցը պաշտպանված է երկու շարք պարիսպներով, որոնց լայնությունը չորս մետր է։ Արևմտյան և հարավային երկրորդ շարքի պարիսպներն ունեն որմնահեցեր և ելուստներ։

Ամրոցն ունի երկու մուտք։ Հյուսիսային մուտքը գտնվում է խիստ թեք լանջի վրա և,

[1] А. А. Мартиросян, Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, էջ 61։

[2] Ս. Եսայան, Կ. Ղաֆադարյան, Շամշադինի մի քանի կիկլոպյան ամրոցները, ՀՍՍՀ ԳԱ «Տեղեկագիր», 1965, № 11, էջ 80։

ըստ երևույթին, ծառայել է միայն հետիոտն ելու մուտի համար։ Մուտքի մոտ երկու պարիսպների պատերը մի քիչ լայնանում են և ապա միանում իրար՝ կազմելով աշտարակաձև ելուստներ, իրենց միջև թողնելով միջանցք՝ հինգ մետր լայնությամբ և 15 մետր երկարությամբ։ Այսպիսով նրանց միջով անցնող հակառակորդն ընկնում էր երկու աշտարակաձև ելուստների պաշտպանների հարվածի տակ։

Հարավային մուտքն ունի երեք մետր լայնություն և ամրացված է կառույցներով։ Արևմտյան կողմի պարսպապատերը միացված են իրար և կազմում են մի կիսակլոր աշտարակ, որից ձգվում է 6 մետր երկարությամբ մի պատ, իսկ արևելյան պարսպի ներսի կողմից դրան հակառակ ձգվում է փոքր կորություն ունեցող մյուս պատը, որը, չհասնելով արևմտյան պատին, մուտքին տալիս է տասը մետր պատսպարված խորություն։ Ամրոցից դուրս, մուտքի առջև կառուցված են երկու կիսակլոր պարիսպներ՝ 20 և 50 մետր հեռավորության վրա։ Առաջինից պահպանվել են միայն առանձին քարեր, իսկ երկրորդից՝ միայն արհեստական դարավանդը, որի վրա հավանաբար եղել է պարիսպը։ Արևելյան՝ առաջին մուտքից անցկացված է մի լրացուցիչ պատ, որը միացնում է վերոհիշյալ կիսակլոր պարիսպները և պահպանում մուտքը կիրճի կողմից։ Ամրոցի կենտրոնում կան ոչ մեծ, ուղղանկյուն շինության հետքեր, կառուցված կոպիտ անտաշ քարերով։ Ամրոցի մակերեսը ծածկված է չիմի հաստ շերտով, որի տակից նկատվում են կացարանների հետքեր։ Բլրի արևելյան մասում անցկացվեց մի հետախուզական հոր՝ 5×5 մետրով, խորությունը՝ 0,7 մետր, որից ցած ընկած է մայր հողը։ Բացվածքում հայտնաբերվեցին անտաշ քարերով կառուցված երեք պատ և մի միջնապատ։ Անմիջապես չիմի տակ հայտնաբերվեցին մեծ քանակությամբ սև և կարմիր խիստ պրոֆիլավորված քրեղանների բեկորներ և լայնաբերան սափորների կանթեր՝ ուղղահայաց կտրվածքներով և կլոր փոսիկներով։ Այս շերտի խեցեղենը բնորոշ է երկաթի լայն տարածման ժամանակաշրջանի համար՝ հայտնի է Կարմիր-բլուրից, Խրտանոցից, Ախթալայից, Ակներից ու այլ տեղերից և թվագրվում է մ. թ. ա. VII—VI դդ.[3]։

Վերջին շերտում հանդիպում են կոպիտ, խոշոր սև անոթների և փոքրիկ սև փայլուն քրեղանների բեկորներ, որոնց շուրթերը զարդարված են ներճկված գիգզագ գծերով՝ մի նախշաձև, որը բնորոշ է ուշ բրոնզի դարի և վաղ երկաթի ժամանակաշրջանի (մ. թ. ա. II հազարամյակի վերջ, I հազարամյակի սկիզբ) հուշարձանների համար։ Այդպիսի անոթներ հայտնի են Գոլովինոյից, Գիլիջանից, Կարմիր-բլուրի նախաուրարտական շերտերից[4]։ Այդ նույն շերտում հայտնաբերվել են կովկասյան ազնվացեղ եղջերուի սղոցած եղջյուրներ[5]։

Քարի գլուխ ամրոցը (նկ. 1) գտնվում է Նավուր գյուղի հարավային ծայրամասի բլրի վրա։ Նույն բլրի ստորոտին գտնվում են երկու մենհիրներ։ Ամրոցը, ըստ վայրի տեղագրման, ունի գրեթե կլոր ձև և շրջապատված է չորս արհեստական դարավանդներով և երկու շարք պարիսպներով, որոնց հետքերը պարզ նշմարվում են։

Միջնաբերդը գրավում է բլրի գագաթը, որի պարիսպների լայնությունը չորս մետր է։ Բլրի հարավային կողմում գտնվող ժայռերը օգտագործված են որպես պարսպի շարունակություն, ինչպես այդ արված է Լճաշենի ամրոցում և այլուր[6]։

Մուտքը գտնվում է ամրոցի արևելյան մասում։ Իր կառուցվածքով այն խիստ նման է Տանձուտ ամրոցի մուտքին։ Այսպես, առաջին երեք պարսպապատերը հեռանում են երկրորդից 25 մետրով։ Արտաքին պարսպի մուտքից դեպի ամրոցը սկիզբ են առնում երկու զուգահեռ պատեր, որոնք ունեն 15 մետր երկարություն և որոնց միջև մնում է 3 մետր լայնությամբ մուտք։ Այդ միջանցքը լայնանում է կիսակլոր ձևով և միանում ներքին պարսպի մուտքին՝ թողնելով իր առջև 15×10 մետր հրապարակ։ Պաշտպանությունը ուժեղացնելու նպատակով արտաքին պարսպի հյուսիսային կողմից դեպի կիսակլոր պատը կառուցվել է միջնապատ։ Այդ ամրությունների շնորհիվ մուտքը դառնում է գրեթե անմատչելի։ Ամրոցը գրավում է 1,5 հեկտար տարածություն, որից 0,5 հեկտարը՝ միջնաբերդը։

Սրբտրիներ ամրոցը գտնվում է Նավուր գյուղից 6 կմ դեպի արևելք, ժայռաբլրի վրա, որի արևմտյան և հյուսիսային լանջերը գահավեժ են, իսկ հարավային և արևելյան լանջերը ունեն ավելի քիչ թեքություն։ Ամրոցի պարիսպները կառուցված են բլրի ուրվագծին հարմարեցված՝ ձվաձև են և գրավում են 1/3 հեկտար տարածություն, որի կեսը՝ միջնաբերդը։ Պարիսպները արևելյան և հյուսիսային մասերում պահ-

---

[3] А. А. Мартиросян. Раскопки в Головино, Ереван, 1954, աղ. XI.

[4] А. А. Мартиросян. Гор. Тейшебаини. Ереван. 1961, նկ. 21а և 21б։

Հ. Մնացականյան, Դամբարանների պեղումները Գոլովինո գյուղում, «Աշխատություններ Հայաստանի պետական պատմական թանգարանի», հատ. 5, 1959, նկ. 20։

[5] Բնորոշումը՝ ըստ Ս. Մեծլումյանի։

[6] Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1։



Նկ. 1.

պանվել են միայն մեկ շարք քարերով, մյուս մասերում չորս մետր լայնությամբ պարզ երևվում է պարիսպը, տեղ-տեղ բարձրանալով մինչև 2 մետր։ Միջնաբերդը ամրացված է պարիսպների երկու շարքով։ Դրանք հարավային մասում միանում են երկու մեծ ժայռերի, որոնց միջև գտնվում է երկրորդ մուտքը։ Ամրոցի պարիսպները շարված են կոպիտ անտաշ քարերով։ Արտաքին պարիսպը իր հարավում և արևմտյան մասում ունի ելուստներ։ Ամրոցի մուտքի մոտ նկատվում է մի խոշոր աշտարակի հետք (10×10)։ Ամրոցում գտնվեց խոշոր սև անոթի բեկոր՝ փորագիր զարդանախշերով, որը բնորոշ է Ռեզկին լագերի, Ղրղիի Աստղե-բլրի նյութերին և թվագրվում է մ. թ. ա. I հազարամյակի ըսկզբով։ Ամրոցը ջրազուրկ է։

Դաշտի ամրոցը գտնվում է Նավուր գյուղից 3 կմ դեպի հարավ-արևելք։ Կառուցված է փոքր, համարյա կլոր բարձունքի վրա, որը շրջապատից բարձր է 12—15 մետր։ Ամրոցը գրավում է 1,8 հեկտար տարածություն, որից 0,5 հեկտար՝ միջնաբերդը։ Միջնաբերդի պարսպապատերի լայնությունը 3—4 մետր է։ Հարավային կողմից դրանք մերձենում են ժայռերին, իսկ մյուս կողմերից՝ շրջանցում բլուրը։ Միջնաբերդի պարիսպները ունեն երեք որմնահեցեր՝ 10—15 մետր երկարությամբ և 2—3 մետր լայնությամբ, դարձված դեպի հյուսիս-արևմուտք։ Պատերը շարված են երկշար կոպիտ կրաքարերից, որոնց մեջ, առանց որևէ շաղախի լցված են մանր քարեր։

Բացի հիմնական պարիսպներից ամրոցն ունի նաև երկու պարիսպներ, որոնք անցնում են հարավ-արևելքից դեպի հարավ և ապա հարավ-արևմուտք։ Դրանցից առաջինը միանում է հյուսիսային կողմի առաջին պարսպին։ Պարիսպներից պահպանվել են միայն առանձին քարեր և պատերի աննշան հատվածներ։ Ամրոցի ներսում երևում են երկու կացարանի հետքեր։ Մեկը, որ գտնվում է միջնաբերդի հյուսիս-արևելյան անկյունում, ներկայացնում է մի ուղղանկյուն սենյակ (7×25 մ)։ Երկրորդ կացարանը գտնվում է ամրոցի հարավային մասի ժայռի տակ, միջնաբերդի պարսպի արտաքին կողմում և ունի 32×3 մ չափեր։ Ամրոցը ջրազուրկ է։

Ոերդ ավանի ամրոցը (նկ. 2) տեղադրված է ավանի հարավ-արևելյան մասի բարձունքի վրա, որտեղ այժմ 1915 թ. եղեռնի զոհերին նվիրված գրոսայգին է։ Ամրոցը կառուցողները հմտորեն օգտագործել են բլրի բնական պայմանները՝ պարիսպները հարավային և արևելյան լանջերում մոտեցնելով տեղի գահավեժ ժայռերին, որոնք ունեն 20—30 մետր բարձրություն։ Ամրոցի պարիսպները շարված են խոշոր կոպիտ կրաքարերից և, շրջանցելով բլուրը երեք կողմից, միանում են նշված ժայռերին։ Պարսպի լայնությունը չորս մետր է, որ տեղ-տեղ պահպանվել է մինչև հինգ մետր բարձրությամբ։ Ամրոցն ունի երեք շարք պարիսպներ, որոնք երբեմն խիստ մոտենում են միմյանց (մինչև մեկ մետր)։ Բլրի առավել բարձր մասում կառանկյունաձև կանգնած է միջնաբերդը իր պա-



Նկ. 2.

բիսպներով։ Ամրոցի մուտքը, որը հյուսիսային մասում է, հիշեցնում է Տանձուտի ամրոցի սուտքը։ Այդտեղ արևմտյան կողմի երկրորդ-երրորդ պարիսպները փոքր ինչ կլորացված են դեպի հյուսիս և, միանալով միմյանց, կազմում են ուղղանկյուն աշտարակ։ Հյուսիսային կողմի ժայռերի միջև նույնպես կառուցված է եռանկյունաձև աշտարակ՝ մուտքի առավել ապահով պաշտպանության համար։ Արտաքին պարսպում մուտք հայտնաբերել չհաջողվեց, քանի որ այս պարսպից պահպանվել են մեկական քարեր, բայց ելնելով տեղանքից, կարելի է ենթադրել, որ այն եղել է վերը նշված մուտքից փոքր ինչ դեպի արևմուտք։ Ամրոցը էլ ավելի ամրացնելու նպատակով արևելյան կողմի ժայռերի միջև կառուցված է պարիսպ, որը փակում է երկու ժայռերի միջով անցնող արահետը։ Աշտարակաձև մի կառույց կա առաջին պարսպի և արևելյան ժայռի միացման մասում։ Ամրոցը գրավում է 1,3 հեկտար, որից 1100 քառակուսի մետրը՝ միջնաբերդը։

ԿՐԱՍՆՈՍԵԼՍԿԻ ՇՐՋԱՆԻ ԱՄՐՈՑՆԵՐԸ

Մուղնու Խաչ ամրոցը։ Նոր Բաշգյուղից 2 կմ դեպի արևելք, Մուղնու Խաչ սրբավայրի բարձունքի վրա պահպանվել են կիկլոպյան այս կառույցի պարիսպների հետքերը։ Բարձունքը աստիճանաբար ցած իջնող լեռնաշղթայի վերջավորությունն է, Կարմիր—Իշևան մայրուղու եզրին, Գետիկ գետի աջ ափին։ Նա շրջապատից մոտ հիսուն մետր բարձր է։ Ամրոցից պահպանվել է պարսպապատի միայն մեկ հատվածը, որ շրջանցել է բարձունքի արևելյան վերջավորությունը։ Այնտեղ նկատելի են խոշոր անտաշ բազալտ քարերից մեկ տակ շարվածք և պարսպի ներսի կողմից կացարանների պատերի հետքեր։ Բարձունքի արևելյան լանջին, Մուղնու Խաչի շուրջը պահպանվել են պատերը, որոնք հավանաբար նախկինում եղել են կիկլոպյան կացարան կամ պարսպամաս։ Ամրոցն ունեցել է 300 մետր երկարություն և 20—40 մետր լայնություն, մոտ մեկ հեկտար ընդհանուր մակերեսով։

Ամրոցը հյուսիսից և հարավից եղել է դրեթե անմատչելի իր խիստ թեք լանջերի շնորհիվ։

Բարձունքի երկու ստորոտներով (հյուսիսային և հարավային) հոսում են ջրեր, որոնք հավանաբար բավարարել են ամրոցի կարիքները։

Խոր-թամրոց ամրոցը (նկ. 3) գտնվում է Կրասնոսելսկի շրջանի Օրջոնիկիձե (Ռուրենակերտ) գյուղից 7 կիլոմետր դեպի արևելք՝ Կրասնոսելսկ — Հին Բաշբենդ ճանապարհից 100 մետր ձախ՝ մի բոլորաձև բարձունքի վրա, որը իջխում է լեռնանցքին։

Ամրոցը ձվաձև է և ունի 100 մետր միջին երկարություն և 75 մետր լայնություն։ Բարձունքի մակերեսը հարթ է, ծածկված քանդված կացա-



Նկ. 3.

բանների քարերով։ Մոտավորապես կենտրոնում բարձրանում է մի բլրակ՝ 3—4 մետր բարձրությամբ, որի եզրերին նկատելի են քանդված պատերի հիմքերը։ Բլրակի մակերեսը 40 քառակուսի մետր է։ Ամրոցն ունի մեկ պարիսպ, որն ընդհանրապես լավ է պահպանվել իր երկուերեք շարք քարերի բարձրությամբ։

Ամրոցի պարիսպը կառուցված է ուղիղ գծով. սակայն կան տեղեր, ուր պարիսպը 5—8 մետր կամ դուրս է գալիս ընդհանուր գծից, կամ ներս դնում, որի հետևանքով ստացվում են ուրույն որմնահեցեր։ Ամրոցի հյուսիս-արևմտյան պարսպամասում նշմարվում են պարսպի ընդհանուր գծից դուրս բերված երկու եռանկյունաձև կառույցներ, միմյանց շատ մոտ։ Ենթադրում ենք. որ դրանք քարաբուրգեր են։

Պարիսպը կառուցված է երկշար խոշոր բազալտ քարերից։ Այստեղ արտաքին շարքի քարերը շարված են ողորկ երեսներով դեպի դուրսը, իսկ երկրորդ շարքի քարերը ուղղակի թափված են առաջին շարքին կպած, և երկու շարքերի արանքները լցված չեն ավելի մանր քարերով կամ խճով։ Քարերը շատ խոշոր են, մեծ մասամբ սալանման, նրանց մեծությունը հասնում է 2,5—3 խորանարդ մետրի։ Պետք է նկատել, որ տվյալ բարձունքի վրա, ինչպես նաև մոտակա շրջակայքում այդպիսի քարեր չկան։ Քարը հավանորեն բերված է ամրոցից 2—3 կիլոմետր հեռու գտնվող բարձունքների ժայռապատ լանջերից։

Պարիսպների քանդված լինելու հետևանքով դժվար է որոշել դեպի ամրոց տանող մուտքը, իսկ հարավ-արևելյան պարսպամասից ոչ հեռու պարզորոշ երևում է հետիոտնի մուտքը, որը ծածկված է եղել երկու մեծ սալաքարերով։

Ամրոցը, գտնվելով բարձր լեռնանցքում, բառ երևույթին, ունեցել է ռազմական խոշոր նշանակություն, իշխելով լեռնանցքին՝ Արեգունի լեռներում։

Ամրոցի բարձունքում և մոտակա շրջակայքում ջուր չկա։

Դաշտա-լեռ ամրոցը։ Արտանիշ գյուղից 5 կիլոմետր դեպի հարավ ճանապարհից 500 մետր դեպի Սևանա լիճ կա մի առանձին բլուր, որն իր շրջապատից բարձր է շուրջ 80—100 մ, այստեղ գտնվում է հնագույն ամրոց-շենը։

Բարձունքը խիստ քարքարոտ է, նրա լանջերը համարյա միատեսակ դյուրամատչելի են։ Լանջերը, հատկապես հարավայինը և արևելյանը, ծածկված են բնակարանների ավերակներով։ Բերդ-շենի պարիսպները կառուցված են շրջակայքում առատորեն թափված մեծ քարերից։ Բարձունքի գագաթում, գրեթե կլոր ձևով կա պարսպապատված 2000 քառ. մ մի տարածություն, որը հավանաբար միջնաբերդն է։ Նրա շրջակայքը ծածկված է բնակարանների ավերակներով, 20—50 մ տարածության վրա անցնում է երկրորդ պարիսպը, որը հարավում միանում է երրորդ պարսպին։ Այս երկու պարիսպների միջև նույնպես կացարաններ են։ Ամրոցի չորրորդ ոչ լրիվ պարիսպը սկսվում է երրորդ պարսպի հյուսիս-արևելյան մասից և, շրջանցելով ամրոցը, արևելյան կողմով շարունակվում դեպի հարավ, այնտեղ վերջանում է մի խումբ ժայռերով, չմիանալով որևէ պարսպի։

Պարսպի լայնությունը երեք մետր է։ Երկրորդ և երրորդ պարիսպների հանգույցը աշտարականման է։ Նույնատիպ աշտարակի մնացորդներ կան երկրորդ պարսպի հարավային մասում, որտեղ նկատելի է նաև մուտքը դեպի ամրոց։

Պարիսպներում, հատկապես չորրորդում, օգտագործված են բնական ժայռերը։

Ամրոց-շենք առեղծված է Սևանա լճի հյուսիս-արևելյան կողմի հովում և իր գիրքով ու կառուցողական տեխնիկայով հիշեցնում է Կամոյի շրջանում եղած ցիների դարձ ամրոցը։

Դաշտ-լեռ ամրոցը, հավանորեն, նույնպես մի պահակային կետ է եղել լճի արևմյան ափերից հարձակումները կանխելու համար։ Ամրոցի շրջագիծը հորուսա է շրջապատ առուներով։

Աղջանիի ամրոցը գտնվում է գյուղի արևմրյան դայրամասի բարձունքի հարավային լանջում։ Դրավում է շուրջ մեկ հեկտար տարածություն (150 մ×50 մ)։ Ներսում ու դրսում նկատվում են բազմաթիվ կացարանների հետքեր։ Պարիսպների լայնությունը 4—5 մետր է, կացարանների պատերը ավելի նեղ են, չնայած կառուցման տեխնիկան նույնն է։ Ամրոցի ամրոցի մակերեսը պատերով բաժանված է երեք մասի, որից երկուսը գրեթե հավասար են, մեկը ավելի մեծ է և գրավում է բարձունքի առավել բարձր մասը և հավանաբար հանդիսացել է միջնաբերդը, իսկ մյուս երկուսը եղել են թազամասեր՝ ընդհանուր պատնեշով միացված միմյանց։

Ամրոցի մուտքը եղել է արևելյան կողմից։ Պարիսպները շարված են անտաշ, ճեղքված բազալտ ժայռաբեկորներից, առանց միացնող շաղախի։

Ամրոցից դեպի արևելք մեկ ու կես կմ հեռավորությամբ մի սարահարթի վրա պահպանվել են մի այլ կառույցի հետքեր։ Այս կառույցը գտնվում է ավելի բարձր սարալանջում և հավանորեն ծառայել է որպես դիտակետ։ Ունի կիսաշրջանաձև, երկու մետր լայնությամբ, ավելի մանր քարերով շարված պատեր, որոնց երկու ծայրերը միանում են արևմտյան կողմից բարձրացող անառիկ ժայռարլրին։ Պատերից պահպանվել է միայն մեկ շարքը։ Կառույցը ունի 55 մ×35 մ մակերես։

Ամրոցից դեպի հարավ, բարձունքի ստորին լանջերը և ստորոտը ծածկված են միջնադարյան գերեզմաններով, իսկ նրանից էլ դեպի հարավ, Սևանա լճի ցամաքած մասում հայտնաբերվեց մի մեծ դամբարանադաշտ, որ, մեր կարծիքով, ժամանակակից է ամրոցի շենին։

Դոշի բերդ ամրոցը։ Մարտունի գյուղից երեք կիլոմետր հարավ-արևմուտք՝ սարահարթի վրա գտնվում են նշված կիկլոպյան ամրոցի պարիսպների մնացորդները։ Սարահարթի արևմտյան և հյուսիսային կողմերի լանջերը խիստ թեքությամբ իջնում են դեպի ձորերը, որտեղից ամրոցը անմատչելի է դառնում, իսկ արևելքից և հարավից սարահարթը աննշան թեքությամբ իջնում ու միանում է շրջապատի հարթավայրին։ Ամրոցը գրավում է ավելի քան կես հեկտար (90×60) տարածություն՝ բոլոր կողմերից պարբսպապատված, ու թեև դրանք ավերված են (միայն տեղ-տեղ պահպանվել են 3—4 շարքերի բարձրությամբ), սակայն պարզ երևում են նրանց հիմքերը, որոնց լայնությունը 4 մետր է։ Երկշար մեծ քարերի միջև լցված են մանր քարեր ու խիճ։ Ամրոցի մակերեսը խիստ չմապատված է և հազիվ են նշմարվում կացարանների հետքերը։ Պարիսպներից դուրս դեպի հարավ նկատվում են կիսակլոր, բավականին ընդարձակ բնակարանների պատեր։ Ամրոցի մուտքը հարավային մասում է, մոտ 4 մետր լայնությամբ, նրա աջ ու ձախ կողմերում երևում են խոշոր (7 մ×12 մ) աշտարակներ, որոնք ապահովել են մուտքի անվտանգությունը։ Մի այլ մուտքի հետքեր կան հարավ-արևելյան պարսպամասում, գլխավոր մուտքից 35 մ հեռավորության վրա, որը ամրոցը կապել է շրջակա բնակավայրի հետ։

Ամրոցը իր դիրքով թեև իշխում է շրջապատի վրա, սակայն իր փոքրությամբ չէր կարող խոշոր ռազմական դեր խաղալ և, ըստ երևույթին, ծառայել է որևէ տոհմի կամ ցեղի պաշտպանությանը։ Ամրոցի շրջակայքում ջուր չկա։

Օրջոնիկիձե գյուղից դեպի հարավ, Գետիկ գետի վտակի ձախ ափին կա մի հարթ բարձունք՝ ծածկված բազմաթիվ փոսերով, որոնք վկայում են իրենց երբեմնի մարդկային կացարաններ լինելը։ Այդ բարձունքի արևելյան մասը զբաղված է ժամանակակից գերեզմանոցով, կան նաև միջնադարյան գերեզմաններ։ Կոպիտ, անտաշ տապանաքարերը հավանորեն բերված են շրջապատի պարիսպներից, ինչպես Կամոյի Բերդի գլխում, Արծվաքարի Ժամիդարի ամրոցում և այլուր։ Ամրոցն ունի երկու հեկտար տարածություն 210 մետր միջին երկարությամբ, 100 մետր լայնությամբ։ Նա շրջապատից բարձր է 15—25 մ, լանջերի թեքությունը աննշան և դյուրամատչելի է։ Ամրոցի պարիսպների հետքերը պահպանվել են բարձունքի եզրերին։ Պարիսպների քարերը անտաշ են, իրենց ձևով մեծ մասամբ հիշեցնում են հրաբխային ռումբերի։ Տեղում՝ բարձունքի վրա, քարեր չկան, ըստ գյուղացիների պատմածի այդ քարերը բերված են բարձունքից դեպի արևելք մոտ 2,5 կմ հեռու ընկած լեռներից։ Պարիսպները տեղ-տեղ պահպանվել են մինչև 2—3 մ բարձրությամբ, 4—5 շար քարերով։ Պարիսպների լայնությունը չի որոշվում։ Պարիսպը հավանաբար երկրորդ շարք չի էլ ունեցել, ինչպես, ասենք, Լճաշենի ամրոցի

7 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1964, № 1։

պարիսպների հնագույն մասը։ Ենթադրում ենք, որ ամրոցի մուտքը եղել է նրա հյուսիս-արևելյան անկյունում, որտեղ ավելի հարթ է և պարիսպների հետքեր չեն մնացել։ Այդ նույն մուտքը օգտագործվում է նաև այժմ։ Ռազմական տեսակետից այս ամրությունը իր դիրքով պաշտպանական հանգույց է, որտեղ Թեթիկի վտակները, ողողելով նրա ստորոտները, ամրոցին տալիս են էլ ավելի հզոր դիրք այդ գետերի հովիտների նկատմամբ։ Պարիսպներից դուրս՝ հարավային և արևմտյան կողմերում նկատվում են կացարանների բազմաթիվ հետքեր, որոնց պատերի շարվածքը նույնն է, ինչ պարսպինը։ Բնակավայրից ոչ հեռու, ամրոցից դեպի արևելք, «Բեզամի աղբյուր» կոչված վայրում, կա մի խոշոր դամբարանադաշտ, որտեղ առանձին տեղերում նկատելի են քարարկղային տիպի դամբարաններ, դրանցից մի քանիսը պեղվել են տեղի դպրոցի ուսուցիչ Բ. Գ. Թորոսյանի կողմից[9]։

Հայտնաբերված նյութերը բաժանվում են երկու խմբի։ Առաջինը վերաբերում է վաղ երկաթի դարաշրջանին և բաղկացած է բազմաթիվ խեցեղեն անոթներից, բրոնզե զարդերից, դաշույնից և մեկ դրից (աղյուսակ 2, նկար 1—9, 11—14, 16—20)։

Նշված ժողովածուն իր ստույգ զուգահեռներն ունի մ. թ. ա. I հազարամյակի սկզբի Հայաստանի հուշարձաններում։ Իրենց ձևով ձցումը, դաշույնը, քրեզանների և լայնաբերան սափորների խումբը առնչվում է Ռեզկին լագերի, Նորադուզի, Աստղաձորի և այլ հուշարձանների նյութերին, որոնք թվագրվում են մ. թ. ա. IX—VIII դդ.։



Նկ. 4.

Իրերի երկրորդ խումբը բաղկացած է երկու սափորից և երկու ալեբաստրե կիսանդրիներից։ Առանձին հետաքրքրություն են ներկայացնում ալեբաստրե կիսանդրիները։ Դրանցից առաջինը կնոջ կիսանդրի է՝ մերկ կրծքի տակ խաչված ձեռքերով (նկ. 4)։ Ուսերին գցած խիտոնի ծալքերը երևում են որովայնի տակ։ Գլուխը կոտրված է հնում և պահպանվել է միայն վզի կեսը։ Կիսանդրու ստորին ձախ մասը թերի է։

Դրա հետ գտնվել է նաև երկրորդ կիսանդրու մի մասը։ Խաչած ձեռքերի տակ նույնպես պահպանվել են խիտոնի ծալքերը։

Այս առարկաների թվագրությունը հարուցում է որոշակի դժվարություններ։ Առաջին անոթը վերաբերում է վաղ հայկական ժամանակաշրջանին և թվագրվում է մ. թ. ա. VI—V դարերով։

Երկրորդ կարմիր սափորն ավելի ուշ շրջանի է և կարող է թվագրվել անտիկ ժամանակով։ Ինչ վերաբերում է կիսանդրիների թվագրությանը, այդ հարցը մնում է բաց, քանի որ չհաջող-

---

8 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1965, № 1։

9 Հետագայում հեղինակները նյութերը տեղափոխել են Երևան (Հայաստանի պատմության թանգարան)։

վեց համեմատական զուգահեռներ գտնել։ Ըստ երևույթին, դրանք, ինչպես և կարմիր սափորը, թվագրելի են անտիկ ժամանակով։

Երկու շրջանների կիկլոպյան ամրոցների համառոտակի ուսումնասիրությունից մենք հանգել ենք հետևյալ եզրակացություններին.

Կիկլոպյան ամրոցները ամենուրեք ուսեն իրենց ընդհանուր գծերը (անտաշ, ճեղքված բազալտ կամ կրաքարեր, առանց միացնող շաղախի շարվածքներ)։

Ամեն մի կիկլոպյան ամրոց ունի իր առանձնահատկությունները, նայած վայրին և տվյալ ժամանակաշրջանի ռազմական արվեստի զարգացման աստիճանին։ Մոտավոր ժամանակակից այս կամ այն շրջանի ամրոցները ունեն ընդհանուր գծեր (Շամշադինի շրջանի ամրոցների մուտքերի նմանությունը)։

Նշված շրջանների կիկլոպյան ամրոցների կառուցման ժամանակի հարցը առայժմ մնում է լուծված հնագիտական նյութեր չլինելու պատճառով։ Տանձուտի ամրոցի հետախուզահորից և Գեղամի-աղբյուր (Օրջոնիկիձե) վայրի դաշտից հայտնաբերված նյութերը ցույց են տալիս, որ ամրոցները գոյություն են ունեցել մ. թ. ա. II հազարամյակի վերջին և I հազարամյակի առաջին կեսին։

Հետագա մանրակրկիտ ուսումնասիրությունները հնարավորություն կընձեռեն ավելի ճիշտ որոշելու ամրոցների կառուցման ժամանակաշրջանը, նրանց գոյության հարատևությունը և այլ հարցեր։

Գ. ՄԻՔԱՅԵԼՅԱՆ, Ս. ԵՍԱՅԱՆ

ЦЕННЫЕ ПЕРВОИСТОЧНИКИ ИСТОРИИ АРМЯНСКОГО НАРОДА

Институт истории АН Арм. ССР и Матенадаран проводили и проводят большую работу по выявлению, изучению и публикации всевозможных первоисточников, в числе которых памятные записи («гишатакараны») и мелкие хроники XIII—XVIII веков.

Благодаря многолетнему труду члена-корреспондента АН Арм. ССР Л. С. Хачикяна и доктора исторических наук В. А. Акопяна в распоряжении исследователей имеются ценные коллекции гишатакаранов — памятных записей армянских рукописей XIV—XV вв. («Памятные записи армянских рукописей XIV в.», составил Л. С. Хачикян, Ереван, 1950, его же—«Памятные записи армянских рукописей XV века», ч. I, 1955, ч. II, 1958 и ч. III, 1967) и мелких хроник XIII—XVIII вв. («Мелкие хроники XIII—XVIII вв.», т. I, Ереван, 1951, т. II, 1956, составил В. А. Акопян).

Армянские средневековые авторы, писцы и переписчики после окончания работы над рукописными книгами оставляли чистые листы для всевозможных записей. Авторы книг, заказчики, переписчики, художники-миниатюристы, переплетчики, лица, получавшие книгу как наследство или подарок, на этих чистых листах оставляли свои записи, где указываются их имена, иногда имена всех близких родственников, правителей области, страны, католикоса, шаха, султана. В памятных записях мы находим краткие характеристики правительств и правителей, материального и правового положения населения, быта и нравов. Авторы записей описывают походы, нашествия, рассказывают о стихийных бедствиях, о войнах, голоде, эпидемиях, свирепствовавших в Армении и соседних странах, называя даты, имена, географические пункты и т. д. Исследователь может найти данные о ценах, мерах, весах, а иногда и о торговле, ремеслах, сельском хозяйстве и т. д.

Таким образом, в памятных записях мы находим не только нужные сведения об этих рукописных книгах, не только их «биографию», но и миниатюрную историю времени, данной провинции, а то и страны. Хотя эта «история» весьма кратка и фрагментарна, тем не менее она представляет большую ценность, ибо отражает думы и чаяния участника, свидетеля или современника событий. Если учесть и то, что авторами этих записей являются люди, проживавшие во многих населенных пунктах Армении и Закавказья, а также армянских колониях, рассеянных во многих странах, то будет понятна та роль, которую могут играть гишатакараны в исследовании истории армянского народа и его многогранных связей с другими народами.